



հայաստան հաճախական հիճնադրաճ

Հայաստանի Հանրապետության Նախագահի
2018 թվականի երիտասարդական մրցանակ
Բաց մրցույթ

հայցողի կողմից ներկայացվող փաստաթղթերի
ցանկ

1. *Գիմում-հայտ (լրացնել կից ձեռք),*
2. Անձնագիր և անձնագրի պատճեն,
3. Կենսագրություն (resume/CV) (Ներկայացնել տպագիր)
4. Տեղեկանք ուսման/աշխատանքի վայրից,
5. Արվեստի գործերի հետ ներկայացնել նաև մեկնաբանություն և տեղեկանք, այն մասին, որ տվյալ գործը /աշխատանքը / կատարված է հայցողի կողմից:
6. Գրականության բնագավառի գործերի հետ ներկայացնել երկու երաշխավորագիր մրցանակի ներկայացվող ստեղծագործության մասին՝ տրված գրականագետի կամ գրողի կողմից: Երաշխավորագրերը ներկայացնել ստորագրված և կնիքով վավերացված: Գրականության բնագավառում ընդունվում են պատմվածքների կամ բանաստեղծությունների շարքեր՝ բաղկացած առնվազն երեք ստեղծագործություններից և տպագրված գրքով կամ պարբերականներում:
7. Մրցանակի ներկայացվող գործը:

Հայտերն ընդունվում են
2019 թվականի փետրվարի 1-ից մինչև փետրվարի 28-ը ներառյալ:

Ծ ա ն ու ց ու մ

Մրցույթին կարող են մասնակցել 2018 թվականին ստեղծված աշխատանքները՝ հրատարակված /գրքեր/, ներկայացված, ցուցադրված /կինո, թատրոն, նկար, քանդակ, դիզայն, ֆոտո/:

Գրականության բնագավառի համար փաստաթղթերի փաթեթը ներկայացվում է 6-ական օրինակից, մեկը՝ բնօրինակ, մյուս հինգը՝ պատճենահանված:

Վիզուալ արվեստի բնագավառի համար փաստաթղթերը ներկայացվում են մեկ օրինակից:

Վիզուալ արվեստի_բնագավառում տարիքային սահմանափակումը՝ 18-ից մինչև 25 տարեկան:
Գրականության բնագավառում տարիքային սահմանափակումը՝ 18-ից մինչև 27 տարեկան:
Մասնակիցների տարիքը սահմանվում է տվյալ տարվա **մարտի 31-ի դրությամբ:**

Մրցանակաբաշխությանը կարող են ներկայացվել միայն այն ստեղծագործությունները, որոնք առաջին անգամ հրատարակվել, հրապարակվել, կատարվել, ցուցադրվել, բեմադրվել են 2018 թվականին:

Գրականության բնագավառում ընդունվում են պատմվածքների կամ բանաստեղծությունների շարքեր՝ բաղկացած առնվազն երեք ստեղծագործություններից և տպագրված գրքով կամ պարբերականներում: Ներկայացված ստեղծագործությունների մեջ նախկինում տպագրված գործերը պետք է կազմեն ոչ ավել քան 10%:

Վիզուալ արվեստների աշխատանքների մրցույթն անցկացվում է երկու փուլով. առաջինը՝ ընտրական, երկրորդը (Եզրափակիչը)՝ ցուցահանդես:

1. Դիմում-հայտը, կից փաստաթղթերի հետ՝ գեղանկարչության, գրաֆիկայի, քանդակի և այլ մեդիաների աշխատանքները պետք է ներկայացվեն լուսանկարներով մեկ օրինակ՝ փակցված A4 ձևաչափի թղթի վրա և տեղադրված թղթապանակի մեջ /Folder, Portfolio/: Մրցանակի ներկայացվող ստեղծագործության լուսանկարների տակ պետք է նշված լինեն ստեղծագործության անվանումը, չափը, տեխնիկան, տարեթիվը:

Մրցանակի համար կարող է ներկայացվել միայն մեկ ստեղծագործություն, որը կարող է հանդիսանալ առանձին մեկ կտորից աշխատանք, կամ մեկ ամբողջական շարք, կամ մեկ նախագիծ:

Կինոարվեստի և թատերական արվեստի գործերի համար, որոնք տեղադրված են համացանցում (օրինակ Youtube.com), խնդրվում է նշել հղումները, կամ ներկայացնել DVD-ով:

Պարտադիր է ներկայացնել գործի համառոտ բովանդակությունը, հեղինակային նկարագրումը:

2. Առաջին փուլի համար մասնակիցները պետք է ներկայացնեն իրենց աշխատանքների բնօրինակները:
3. Եզրափակիչ փուլը՝ ցուցահանդեսը, տեղի կունենա Հայաստանի նկարիչների միավորումում 2019թ. ապրիլ ամսվա առաջին շաբաթվա ընթացքում:
4. Ներկայացման կարգը պարտադիր է:

ԾԱՆՈՒՅՑՈՒՄ՝ ՀՀ Նախագահի մրցանակ տրվում է միայն մեկ անգամ

Մրցույթին մասնակցելու հայտը և ներկայացման կարգը կարելի է ստանալ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության գրասենյակից կամ Հիմնադրամի կայքից www.himnadram.org:

Գործերը ներկայացնելու և մանրամասն տեղեկությունների համար դիմել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչություն՝ Աիդա Խաչիկյանին:

Հեռ. 52-09-40 (106); 56-01-06 (106); email aida@himnadram.org

0010, Երևան, Հայաստանի Հանրապետություն

Կառավարական 3-րդ մասնաշենք, 2-րդ հարկ

